պէտքին։ Գ. Նուանէսգու փափաքն է որ այդ կալուածը իր անուանը վրայ չըլլայ։

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՑ «ԱՐԱՄԵԱՆ ԵՒ Ս. ԱՆՆԱՅԵԱՆ» ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1901—1902 ուս. ամի.

Ա.

1901—2 *ուս. տարուայ մէջ Արամեան և ս. Աննայեան երկսեռ դպրոցներում պարապմունքներն սկսուել են սեպտ.* 3-*ից, և* 11-*ից կանոնաւորուելով՝ տևել մինչև յունիսի վերջը. դպրոցական օրերի թիւը եղել է* 165։

Տարուայ սկզբին Արամեան դպրոցում կային 111 *աշ., նոր ընդունուեցան* 34, *որով եղան* 145 *աշ. ս. Աննայեան դպրոցում կային* 81 *աշակերտուհի, նոր ընդունուեցան* 17, *որով եղան* 98 *աշակերտուհի. այսպէս երկսեռ դպրոցներում կային* 243 *աշ. և աշակերտուհի. դրանցից տարուայ ընթացքում զանազան պատճառներով կամովին հեռացան* 7 *աշ. և երկուսը վախճանուեցան, որով տարուայ վերջին կային* 234 *աշ. և աշակերտուհի։*

Բացուեցաւ այդ տարին Ե. դասարան լիակատար ծրագրով, ուստի և Արամեան դպրոցն 3 *ստորին բաժանմանց հետ ունէր* 5 *հիմնական դաս., իսկ ս. Աննայեան դպրոցը նոյնքան ստորին բաժանմանց հետ ունէր* 3 *հիմնական դասարան. դրանցից առաջին բաժանմունքներն ըստ առաջնոյն միացած էին և օրիորդաց Բ. ու Գ. դասարանները մի սենեակում էին, որով* 14 *դասարան կար* 12 *սենեակում։*

Ահա աշակերտների և աշակերտուհիների տեղաւորութեան ու յառաջադիմութեան ցուցակը.

	Արամեան դպրոց				ս. Անանեան դպրոց.			
	Աշակերտ.	Փոխուեցան.	Մնացին.	Առնակ.	Աշակերտուհի.	Փոխուեցան.	Մնացին.	Առնակ.
I.	1[illegible]	10	7		1[illegible]	[illegible]3	3	1
II.	24	18	6	—	16	11	5	
III.	25	14	6	5	20	15	5	
Ա.	23	15	8		20	14	6	
Բ.	21	18	3		13	7	6	
Գ.	11	11			10	10	Աւարտ.	
Դ.	11	9	2	—				
Ե.	6	6	Աւարտ.					
	138	101	32	5*	96	70	25	1

Արամեան դպրոցն աւարտեցին 6 աշակերտ, իսկ ս. Անանեան դպրոցը՝ 10 աշակերտուհի։ Մինչև տարուայ վերջը յաճախող 234 աշ. և աշակերտուհուց յաջորդ դասարան փոխադրուել ու աւարտել են 171 (73%) և մնացել 57 (24,3%)։

Բոլոր (243) աշակերտներից և աշակերտուհիներից 155 թոշակաւոր էին (ժողովուած է 1072 թուման) և 88 ձրիավարժ, որոնցից տասը որդեգիր էին հանդ. Մն. Տէր Յակոբեանի։ Թաւրիզի Հայուհեաց բարեգործական միացեալ ընկերութիւնը հոգաց 21 աշ. և աշակերտուհու համար հաղուստ, իսկ Դպր.—Բարեսիրական ընկ.՝ 34 աշ. և աշակերտուհիների դասական պիտոյքը։

Ըստ ծննդավայրի 180 Թաւրիզից էին, 29 Լիլաւաբնակ
43 Ատրպատականի այլ մասերից և
20 հեռաւոր նահանգներից ու այլ երկրներից։

* 5 աշ. և 1 աշակերտուհի արձակուել են անընդունակութեան կամ վարքի պատճառով։

Ծնողաց պարապմունքներին նայելով հետեւեալ կարգերի էին բաժանւում.

Վաճառականների, գործակատարների ու մանրավաճառների որդիք էին 117 կամ 43,1%
Արհեստաւորների « » 58 « » 24,2%
Երկրագործների « » 16 « » 6,2%
Օղեվաճառների « » 15 « » 6,1% եւլն.

1901—2 ուս. տարուայ մէջ, դասերից դուրս եւ աշակերտելոց մտաւոր կրթութեան ու բարոյական դաստիարակութեան նպաստելու համար 1) դաստիարակներն ուղեցոյց են եղել ընթերցանութեան և շաբաթը մի դաս կամովին պարապել ընթերցանութեամբ. այդպիսի դասերի թիւը տարուայ մէջ եղել է 300. 2) հիմնական դասարանների դաստիարակների ղեկավարութեամբ տեղի են ունեցել 5 գրակ. երեկոներ. դրանցից առաջինը նուիրուեցաւ հանգ. Աղ. Երիցեանի յիշատակին, երկրորդը՝ Ղ. Աղայեանին նրա. գրակ. գործունէութեան 25-ամեակի առթիւ. 3) կատարուել են հանդէսներ՝ ս. ս. Վարդանանց, Լուսաւորչի ու Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների տօներին։

Բ.

Անցեալ տարի ուսուցչական խումբը կազմուած էր հետեւեալ 15 անձերից.

1. Ալէքսանեան Աբ. տեսչութեան հետ համրահաշուից ու երկրաչ. . . 9 դաս. (ռոճիկ 485 թուման)
2. Պ. Աղաջանեան Գր. աւանդում է Հայոց լեզու, գրութիւն . . 28 դաս. (ռոճիկ 250 թում.)
3. » Բժշկեան Վ. աւանդում է բնակ. գիտութիւններ ու թուաբ. . . 26 դաս. (ռոճիկ 285 թում.)
4. » Գասպարեան Ս. աւանդ. թուաբանութիւն 16 դասով, նաև վերակացու . (ռոճիկ 170 թում.)
5. » Խանապատեան Ռ. սկսել է սեպտ. 20-ից Ռուսերէն, կենդանաբ. 27 դաս. . (ռոճ. 260 թում.)

6. Պ. Մաքսուդեան Ց. աւանդ. Հայոց լեզու, Ս. Գրոց ուսումն և գրութիւն 28 դաս. (ռոճ. 240 թուա.)
7. » Մել. Ջհանեան Աբր (երթևեկ) անգլերէն 6 դաս. (ռոճ. 65 թուա.)
8. » Յարութիւնեան Ց. (քարտուղար) Հայոց լեզու, գրութիւն 28 դաս. . . (ռոճ. 260 թուա.)
9. » Շահբազեան Աբր. աւանդ. Հայոց պատմութիւն ու գրականութիւն, կրօն 27 դաս. (ռոճ. 240 թուա.)
10. » Զիլթախեան Աբշ. աւանդ. Հայոց լեզու, ձայնագրութիւն, խմբագրութեամբ, 28 դաս. (ռոճ. 220 թուա.)
11. » Զիլինկերեան Գ. աւանդ. Ֆրանսերէն ու պատմութիւն 21 դաս. . . . (ռոճ. 245 թուա.)
15. Մ. Սաղբզ Խ. աւանդ. Պարսկերէն 14 դաս. (ռոճիկ 90 թուա.)
13. Պ. Տէր Յովհաննիսեան Ն. աւանդ. ընդհ. աշխ., գծագրութիւն, կրօն և լեզ 28 դաս. (ռոճ. 200 թուա.)
14. Տիկին Ֆաբրի Հ. աւանդ. ձեռագործ ու կար 10 դաս, նաև վերակացու . . . (ռոճ. 180 թուա.)
15. Պ. Օհանեան Գ. աւանդ. կրօն ու երգեց. (II—III) 12 դաս. նաև վերակացու (ռոճ. 100 թուա.)

Բոլորեքեան միասին պարապում էին շաբաթական 315 դաս, որով ամբողջ տարուայ մէջ աւանդուել է 9351 դաս, առանց հաշուելու միացեալ (4) ու վերոյիշեալ ընթերցանութեան դասերը, ինչպէս և խմբական երգեցողութեան ու մարմնամարզական պարապմունքները։ Հիւանդութեան ու այլ սաիպոդական պատճառներով բոլոր ուսուցիչները բացակայել են 319 դաս, ուելորդ պարապել են 58 դաս, որով չպարապած դասերի թիւն է 261։

Մանկավարժական խորհուրդը ունեցել է 33 նիստ, որոնց մէջ խորհրդակցութեան նիւթ են եղել 1) նորեկների ընդունելութիւնը, 2) գրականական երեկոներն ու ազգային եկեղեցական տօները, 3) ծրագրի բարեփոխութիւնը, 4) աշակ. գրասեղանների հարցը, 5) համադասի ընդհանրացում, 6) փորձնական դասեր (թուով 8 տեղի ունեցան),

7) ընթերցանութեան զեկավարութիւնը, 8) քննութիւններ (թուով 10 — բարձր դասարաններում), ելն։

Մանկական գրադարան

Անցեալ տարի մանկական գրադարանը նուէր է ստացել 100 կտոր գիրք, որով առ 1 սեպտ. 1902 ամի կար 706 կտոր գիրք, բացի պարբերական հրատարակութիւններից։ Այդ գրադարանի միջոցներով առաջ գնուած էին և բնագիտական գործիքներ (պ. Համբ. Թումանեանն անցեալ տարի նուիրեց էլեքտրականութեան վերաբերեալ գործիքներ) և կրկին գնուեցան. ահա այդ հաշիւը.

Մուտք

1900 — 1 թ. մանկ. գրադարանն ունէր	462 դրն.	25 կ.
1901 — 2 թ. պ. Ար. Շահբազեանից Աշոտ վարդ.-ի ձեռամբ ժող.	100 »	
Թաւրիզի Հայ. Բ. Մ. Ընկերութիւնից . .	70 »	
Պ. Դ. Կարապետեանից (Փարիզից) . .	66 »	52 կ.
Աշ. ու աշակերտուհիներից . .	67 »	
Վաճառած 2 կտոր	12 »	
Պարտք գրադարանի ստացուած . .	263 »	90 կ.
	1041 »	67 կ.

Ծախք

Փարիզ գնած բնագիտական գործիքներ (300 ֆր.) ճանապարհի ու այլ ծախքերով .	811 »	37 կ.
Պահարան բնագիտական գործիքների .	100 »	
Մաներ ծախք	1 »	30 կ.
	1041 »	67 կ.

Անցեալ տարի ստացուում էին Արարատ (նուէր պ. Թ. Թումանեանից), Անահիտ (բժ. Ալանեանից) և Լոյս (հրատարակչից)։

Ար. Ալէքսանեան.

13 Փետր. 1903 թ. Թաւրիզ.